

ԱՐԵՎՄՏԱԶԱՅ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կ. Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Արևմտահայ 1-ին համագումարից (1917 թ. մայիս) հետո պատմական մի շարք իրադարձություններ (Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումը և Կովկասյան ճակատի փլուզումը, սովթանական Թուրքիայի ներխուժումը Այսլերկովկաս և երկրամասի անջատումը Ռուսաստանից, ինքնապաշտպանական կոիվները և Հայաստանի Հանրապետության կազմավորումը) բովով անցած արևմտահայ փախստականների վերաբերմունքը նորաստեղծ Հայաստանի Հանրապետության նկատմամբ ավելի քան զուսպ էր. այն դիտվում էր սոսկ որպես «Արարատյան հանրապետություն»¹: Հատկանշական է, որ արևմտահայերի զինված ուժերի մի մասը, ի դեմս Անդրանիկի, ընդհանրապես չճանաչեց «Երևանի հայկական հանրապետությունը», գտնելով, որ այն ըստեղծվել է շնորհիվ Թուրքիայի, որի հետ կնքված հաշտությունը «վիրավորական» էին համարում «ամեն հայրենասեր և հեղափոխական մարդու համար»²:

Մեծ եղեռնից մազապուրծ և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած 150 հազար արևմտահայ փախստականների³ ճնշող մեծամասնության վիճակը 1918 թ. վերջին և 1919 թ. սկզբին ծայր աստիճան ծանրացել էր: Յրտաշունչ ձմռան, համատարած սովի և բծավոր տիֆի համաճարակի հետևանքով մահանում էին հազարավոր փախստականներ: Հանրապետության կառավարության ձեռնարկած միջոցառումները, զանազան բարեգործական կազմակերպությունների ցուցաբերած օգնությունը անբավարար էին և չէին կարող 330-ից 350 հազար⁴ արևմտահայ և արևելահայ բռնազաղթվածներին դուրս բերել ստեղծված տաժանիլի կացությունից: Միաժամանակ Անտանտի պետությունների հաղթանակով ավարտված առաջին աշխարհամարտից հետո Փարիզում (1919 թ. հունվար) հրավիրվել էր հաշտության համաժողովը, որտեղ, ինչպես նշվում էր արևմուտքից ստացված հաղորդագրություններում, Պողոս Նուբարի ղեկավարած ազգային պատվիրակությունն առաջ էր քաշել միացյալ ազատ Հայաստանի անկախության խնդիրը և կազմել էր Արևմտահայաստանի կառավարությունը: Մուղրոսի զինազաղարի համաձայն թուրքական զորամասերը սկսել էին հեռանալ Ռուսահայաստանի տարածքից: «Հենց որ լուր տարածվեց, — նշվում էր խնամատարության նախարարության 1918 թ. դեկտեմբերի 6-ի հաղորդագրությունում, — որ տաճիկները պարպել են Երևանի նահանգը, սկսվեց դաղթականության շարժումը դեպի սեփական

¹ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 228, Ռուբևհ, Հայ Ռեդաիոյականի մը հիշատակները, Լոս Անջելես, 1952, հ. 7, էջ 152—153:

² Տե՛ս «Աշխատանք», Երևան, 22. 01. 1919:

³ Տե՛ս «Կառավարության լրաբեր», Երևան, 15. 10. 1918:

⁴ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 4, «Կառավարության լրաբեր», 15. 10. 1918:

վայրերը»⁵։ Նման իրավիճակում արևմտահայ փախստականները, նրանց ղեկավար շրջանները մոտ ապագայում հայրենի երկիր վերադառնալու մեծ հույս էին փայփայում։

Այդ պայմաններում 1918 թ. դեկտեմբերին Երևանում արևմտահայ նախկին մարմինների անդամների և մտավորականության մասնակցությամբ գումարավեցին մի քանի խորհրդակցական ժողովներ, որտեղ անվերապահորեն առաջ էր քաշվում արևմտահայ նոր համագումարի հրավիրման անհրաժեշտության հարցը⁶։ Դեկտեմբերի 19-ին Երևանի քաղաքային խորհրդարանում ընտրվեց արևմտահայ 2-րդ համագումարը հրավիրող կազմակերպիչ կոմիտեի։ Այդ մարմնի կազմում ընտրվել էին Գրիգոր Բուլղարացին (նախագահ), Արմեն Սասունին, Վարազդատ Տերոյանը (ատենապետ), Ռուբեն Գրամբյանը, Արսեն Կիտուրը (քարտուղար), Սմբատը (Ս. Բորոյան), Հովհաննես Մխիթարյանը, որոնք կոոպտացիայի իրավունքով հրավիրեցին իրենց աշխատանքին մասնակցելու Աղաբեկ Համբարյանին և Վաղարշակ Հոխիկյանին⁷։ Կազմակերպիչ կոմիտեի դիմումի համաձայն Հայաստանի Հանրապետության խորհուրդը⁸ համագումարի հրավիրման կարիքները հոգալու համար դեկտեմբերի 28-ին ընդունեց օրենք՝ կազմակերպիչ կոմիտեին 35 հազար ուրլի նպաստ տալու մասին⁹։

Արևմտահայ համագումարի կազմակերպիչ կոմիտեն 1919 թ. հունվարի 1-ին հանդես եկավ «Արևմտեան Հայաստանի փախստական հայութեան» կոչով, որտեղ ի մասնավորի ասված է. «Համաշխարհային պատերազմը վերջացաւ. մեր դաշնակիցները յաղթեցին, մենք յաղթեցինք։ Սակայն, Արևմտեան Հայաստանի տարագիր հայութիւնը դեռ չկարողացաւ իր նպատակներու և իտէալներու ամփոփած ձևակերպութիւնը հրապարակել և ինքն ալ մասնակից ըլլալ անոնց իրականացման»¹⁰։ Կոչում կազմակերպիչ կոմիտեն մատնանշում էր գումարվող համագումարի երկու հիմնական նպատակները։ Առաջինը՝ արևմտահայ փախստականների «քաղաքական իտէալներու ձևակերպումն ու ներկայացուցութիւնը»։ Երկրորդը՝ «Արևմտեան Հայաստանի համարեա թէ անմարդաբնակ մեր հայրենիքը բազմամարդելու և վերաշինելու, մէկ խօսքով ներդաղթի խնդիրը... աւելի ահաւոր, աւելի անկազմակերպ, և ավելի արիւնոտաւ» գաղթ շարձնելու հիմնավորված մտահոգությունը¹¹։ Կոչն ավարտվում էր բոլոր արևմտահայ փախստականներին ուղղված դիմումով՝ «միանալ այդ երկու մեծ նպատակներու շուրջ, մոռանալ ամէն բան, նոյնիսկ մեր թշուառութիւնը, յախտենական թշուառութենէն աղատուելու, համերաշխ, միաբան, և աննկուն կամքով, մեր առջև դրուած այդ խնդիրներու սիրուն՝ այդ երկու խնդիրները լուծելու»¹²։

Կազմակերպիչ կոմիտեն ապագա համագումարը համարում էր Հայաստանի Հանրապետությունում արևմտահայերի ներկայացուցչական մարմին՝ «Ժողովրդական ներկայացուցչութիւն», «քաղաքական հաստատութիւն մը, որ

⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 4։

⁶ Դեռևս 1917 թ. դեկտեմբերի 15-ին Արևմտահայ 1-ին համագումարում ընտրված Արևմտահայ խորհուրդը իր արտակարգ նիստում որոշել էր 1918 թ. մարտի 4-ին Կարիճում (Էրզրում) հրավիրել արևմտահայ համագումար (տե՛ս Աշխատանք, 24. 1. 1918)։

⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 32։

⁸ Մինչև 1919 թ. օգոստոսը Հայաստանի Հանրապետության խորհրդարանը պաշտոնապես կրել է այդ անվանումը։

⁹ Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները (1918—1919 թթ.), Երևան, 1919 թ., էջ 37։

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 31։

¹¹ Նույն տեղում։

¹² Նույն տեղում։

առանց անտես առնելու փախստականութեան ճգնաժամային վիճակը, ամենէն աւելի և ամենէն առաջ պետք է զբողվել Արևմտեան Հայաստանի փախստական հայութեան քաղաքական նպատակներու ձևակերպման խնդիրներով»¹³։ Այդ նպատակով էլ որոշվել էր համագումարի օրակարգը, պատգամավորների ընտրութեան ձևը և հրավիրված հաստատութիւնների ու առանձին հասարակական գործիչների ցանկը։ Ելնելով արևմտահայ փախստականութեան առջև ծառայած խնդիրներից, կազմակերպիչ կոմիտեն իր «Արևմտահայ փախստականներու երկրորդ համագումարի շրջաբերական-հրահանգում» ներկայացրել էր համագումարի հետևյալ օրակարգը. «1. Արևմտյան Հայաստանի գաղթական Հայութեան քաղաքական նպատակներու ձևակերպումը և արտայայտութիւնը։ 2. Արևմտեան Հայաստանի դաղթական Հայութեան ներգաղթի խնդիրը և կազմակերպութիւնը։ 3. Արևմտեան Հայաստանի գաղթական Հայութեան ներկայացուցչական և Հաշվարդար կոմիտէի ընտրութիւնը»¹⁴։

Նկատի ունենալով, որ «Արևմտահայ Երկրորդ Համագումարը ներկայացուցչական ժողովն է ըլլալու Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ ապրող ամբողջ Արևմտահայերու»¹⁵, կազմակերպիչ կոմիտեն համագումարի պատգամավորների ընտրութիւնը նախատեսում էր անցկացնել ոչ կուսակցական երկաստիճան սկզբունքով։ Տեղերում 300-ից 500 արևմտահայեր պետք է ընտրեին շրջանային պատվիրակներ, որոնք արդեն շրջանային ժողովներում ընտրելու էին համագումարի պատգամավորներ, այն հաշվով, որ յուրաքանչյուր 3000 արևմտահայերին ներկայացնի մեկ պատգամավոր։ Ընտրութիւններին մասնակցելու իրավունք ունեին 18 տարին լրացած անխտիր բոլոր արևմտահայերը։ Հայաստանի Հանրապետութեան տարածքով ընտրութիւնների սահմանափակումը կազմակերպիչ կոմիտեն բացատրում էր ճանապարհների և հաղորդակցութեան հնարավորութիւններով, նշելով, որ «Համագումարը իր դռները լայն պիտի բանայ Հանրապետութեան սահմաններէն դուրս ընտրած պատգամավորներու առջև, եթե անոնք, համապատասխան ներկայ հրահանգին և իր ժամանակին փութան իրենց ձայնն ալ միացնել մերինին»¹⁶։ Համագումարին հրավիրել էին Ամենայն Հայոց կաթողիկոսին, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան և խորհրդի, Թիֆլիսում գտնվող դաշնակից պետութիւնների, մի քանի հասարակական բարեգործական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, ինչպես նաև արևմտահայ հասարակական հայտնի գործիչներին, այդ թվում՝ զորավար Անդրանիկին¹⁷։

Արևմտահայ 2-րդ համագումարը գործեց Երևանում 1919 թ. փետրվարի 6-ից 13-ը։ Կազմակերպիչ կոմիտեն նախատեսում էր համագումարի աշխատանքը սկսել հունվարի 25-ին, սակայն շրջաններից ստացված դիմումների համաձայն այն հետաձգվեց 10 օրով¹⁸։ Մինչ համագումարի պաշտոնական բացումը, փետրվարի 4-ին և 5-ին տեղի ունեցան նախապատրաստական երկու նիստեր, որոնց ընթացքում պատգամավորները ժանդապացան կազմակերպիչ կոմիտեի կատարած աշխատանքին և գաղտնի քվեարկութեամբ ընտրեցին համագումարի երեք համանախագահ (Գր. Բուլղարացի, Վ. Տերոյան և Վ. Քրմոյան), ինչպես նաև երկու քարտուղար (Ա. Կիտուր և Հ. Վարդապետյան), երեք հոգուց կազմած մանդատային հանձնաժողով և չորս հանձնաժո-

¹³ Համաձայն Տեղեկագիր Արեւմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտէի հաշիւը, Թիֆլիս, 1919, էջ 4։

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 32։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 32։

¹⁷ Տե՛ս նույն տեղում, նաև տես. Համաձայն Տեղեկագիր..., էջ 4։

¹⁸ Տե՛ս Համաձայն Տեղեկագիր..., էջ 4։

ղովների (շրջաններից զեկուցումների, քաղաքական, ներգաղթի և հաշվհհարդարի ու կազմակերպչական) նախագահներին¹⁹:

Համագումարի բացման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ փետրվարի 6-ին Հայաստանի խորհրդի նիստերի դահլիճում: Համագումարի համանախագահներից մեկի՝ Գր. Բուլղարացու բացման խոսքից հետո Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանը ընթերցեց Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնություն կոնդակը: Դրանից հետո ելույթով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ Հ. Քաչազնունին: Հանրապետության նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 3-ի նիստում քննվել էր Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի հրավերի գրությունը՝ համագումարի բացմանը կառավարության ներկայացուցիչ ուղարկելու մասին²⁰ և որոշվել. «Հանձնարարել Մինիստր-նախագահին կառավարության կողմից ներկա լինել Արևմտահայերի II համագումարի բացմանը»²¹: Համագումարի բացմանը կառավարության նախագահի ներկա լինելու նախարարների խորհրդի հանձնարարականը խոսում է այն մասին, թե ինչպիսի նշանակություն էր տալիս այդ համագումարին հանրապետության ղեկավարությունը: Հ. Քաչազնունին «յայտնեց իր կառավարութեան ցանկութիւնը վերացած տեսնել այս համագումարով հայութեան հատուածական բաժանումը»²²: Հայաստանի խորհրդի ներկայացուցիչ Ս. Վրացյանի խոսքի հիմքում ընկած էր նույն գաղափարը²³:

Մի քանի ողջույնի ելույթներից հետո համագումարի աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ համանախագահ Վ. Տերոյանը, որը «բնորոշեց մանրամասն կերպով այն քաղաքային (իմա՝ քաղաքական— Կ. Հ.), տնտեսական և սոցիալական պայմանները, որոնց մեջ կը բացւի համագումարը»²⁴: Համագումարի մյուս համանախագահ Վ. Քրմոյանը «յարգանքի խօսքեր ուղղեց մեռնող ժողովրդի, նահատակած հասարակական գործիչներու և պանծալի հերոսներու յիշատակին»²⁵, որից հետո «ժողովը և բազմաթիւ ունկընդիրներն յոտնկայս երեք անգամով յարգեցին ընկնող գործիչներու, մտքի մշակներու, մարտիկներու և մահացող ժողովուրդի յիշատակը»²⁶: Այնուհետև համագումարում ընթերցվեցին ողջույնի մի շարք գրություններ, այդ թվում՝ Հ. Յ. Դաշնակցության Արևմտյան Հայաստանի կենտրոնական կոմիտեի, Հայ Ռամկավար կուսակցության Երևանի շրջանային վարչության, եզդիների առաջնորդներ Զահանգիր աղայի և Թեյֆուր բեկի, «Աշխատանք» և «Վան-Տոսպ» թերթերի խմբագրությունների²⁷:

Այս հանդիսավոր բացումից հետո տեղի ունեցան համագումարի 6 պաշտոնական, ինչպես նաև հանձնաժողովների բազմաթիվ նիստեր: Առաջին նիստում մանդատային հանձնաժողովը ներկայացրեց համագումարի պատգամավորների հետևյալ կազմը. Երևանից 8 պատգամավոր ներկայացնում էին 31.700 փախստական, էջմիածնից 3-ը՝ 42.600, Աշտարակից 2-ը՝ 12.880, Դարաշիչակից (Մաղկաձոր) 5-ը՝ 23.750, Կրգ Բուլաղից (Կոտայք) 5-ը՝ 17.570, Սուրմալուից 4-ը՝ 25.700, Միլի Դարայից (Միլի Ձոր) 1-ը՝ 10.670, Ալեք-

¹⁹ Տե՛ս Համաճօտ Տեղեկագիր..., էջ 4—5:

²⁰ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 80:

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 19:

²² Համաճօտ Տեղեկագիր..., էջ 7, տե՛ս նաև՝ «Աշխատանք», 11. 02. 1919, «Ժողովուրդ», Երևան, 11. 02. 1919:

²³ Տե՛ս նույն տեղը, տե՛ս նաև «Աշխատանք», 11. 02. 1919:

²⁴ Աշխատանք, 11. 02. 1919:

²⁵ Համաճօտ Տեղեկագիր..., էջ 7:

²⁶ «Աշխատանք», 11. 02. 1919:

²⁷ Տե՛ս Համաճօտ Տեղեկագիր..., էջ 7—8:

սանդրապոլից 1-ը՝ 10.000, Դիլիշանից 2-ը՝ 12.000, Բաշգառնիից (Գառնի) 1-ը՝ 5.000, Նոր Բայազետից 7-ը՝ 27.923: Ընդամենը՝ տեղերից ընտրված 39 պատգամավոր: Համագումարին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էին նաև կազմակերպիչ կոմիտեի 9, Արևմտահայ խորհրդի 2 անդամներ, Հայաստանի խորհրդից Ս. Վրացյանը, մեկական ներկայացուցիչ Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ կոմիտեից, կովկասի հայոց բարեգործական ընկերությունից, անգլիական Լորդ Մեյլը կոմիտեից, «Աշխատանք» և «Վան-Տոսպ» թերթերից²⁸: Համագումարում ներկայացված չէին Ղարաբաղի իսախյի (Վանաձոր) (ընտրված 2 պատգամավորների բացակայության պատճառով), Ղամարուլի (Արտաշատ), Դարուլագյազի (Եղեգնաձոր) և Սիսիանի արևմտահայ փախստականները:

Զորավար Անդրանիկը հրոժարվել էր մասնակցել համագումարի աշխատանքին: Այդ կապակցությամբ կազմակերպիչ կոմիտեի անդամ Ա. Սասունին հատուկ մեկնել էր Սիսիան, գործարի արտ: Համագումարի փետրվարի 8-ի նիստում Ա. Սասունին «յայտնեց Անդրանիկի համագումարին չմասնակցելու պատճառներու մասին»²⁹: Անդրանիկը «չէր համաձայնել մասնակցել մի ժողովում, որը գումարելու էր «թիրբերի ձեռքով ստեղծված Հայաստանի» մայրաքաղաքում»³⁰, Կարելի է ենթադրել, որ զորավարի նմանօրինակ վերաբերմունքն է խոչընդոտել Սիսիանում ապաստանած արևմտահայ փախստականների կողմից համագումարի համար ներկայացուցիչների ընտրությանը: Իր պաշտոնական պատասխանում Անդրանիկը գրում էր. «Մտածելով որ չեմ կրնար այդ Համագումարին մասնակցելու օգտակար դառնալ և թեթևացնել Ձեր աշխատանքները, ուստի հրաժարում եմ ներկայ լինել այդ Համագումարին: Ձեզ կատարեալ յաջողութիւն կը ցանկամ»³¹:

Այսպիսով, վճռական ձայնի իրավունքով համագումարի աշխատանքին մասնակցում էին 55 պատգամավոր, որից 47-ը արևմտահայ դաշնակցականներ էին³², 5-ը՝ սահմանադիր ուսմկավար կուսակցության անդամներ³³:

Արևմտահայ 2-րդ համագումարն իր բուն աշխատանքն սկսեց շրջաններից արևմտահայ փախստականների «դարձուրելի կացութեան մասին» պատգամավորների հաշվետվությունների հիման վրա համապատասխան հանձնաժողովի նախագահ Ռ. Շատվորյանի ներկայացրած զեկուցման քննարկումով: Զեկուցողը «մանրամասն նկարագրում է այն թշուառ և անտանելի դրութեան մասին, որ ապրում է տաճկահայ ժողովուրդը: Սովը մի կողմից, համաճարակը և հակասանիտարական պայմանները միև կողմից օրական տանում են հարիւրավոր զոհեր»³⁴: Արդյունքում ընդունվեց «Շրջաններէն եկած զեկուցումներու մասին» կամ, ինչպես իրենք՝ պատգամավորներն էին անվանում, «սովի մասին» բանաձևը: Համագումարը արձանագրելով, որ փախստականությունը «փաստօրէն սովի ճիրաններու մէջ վերջնական բնաջնջման նախօրեակը կապրի», որոշում է, «որ իրմէ ընտրուած մարմինը ազդու դիմումներ կատարէ դաշնակիցներու կովկասեան ընդհ. հրամանատարին, դաշնակից պետութիւններու համահերոպական կօնֆերանսին, այլև Փարիզի

²⁶ Տե՛ս Առյժ տեղը, էջ 9—10: Ի դեպ, այստեղ բերված արևմտահայ փախստականների մի թվաքանակ փոքր-ինչ այլ է տրված Ա. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» մեծագրությունում (1928, Փարիզ):

²⁷ «Աշխատանք», 18. 02. 1919:

³⁰ Ս. Վրացյան, Աշխ. աշխ., էջ 230:

³¹ Համառոտ Տեղեկագիր..., էջ 7:

³² Տե՛ս «Աշխատանք», 18. 02. 1919:

³³ Տե՛ս Ս. Վրացյան, Աշխ. աշխ., էջ 231:

³⁴ «Ժողովուրդ», 14. 02. 1919:

մէջ կազմած մեր նոր հայկական կառավարութեան և պահանջել հաց և շուտափոյթ օգնութիւն մահացող ժողովրդի համար, ինչպես նաև յանձնարարել, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն նպաստի և խնամատարական գործը կազմակերպելու և լավ հիմքերու վրայ դնելու»³⁵։ Միաժամանակ «որոշեցաւ համագումարի կողմէ շնորհակալութեան խօսք ըսել Հայաստանի կառավարութեան, անգլիական կորդ Մէրի (Մեյլըր— Կ. Է.) ընկերութեան, Ամերիկեան նպաստամատոյց ընկերութեան և բոլոր անոնց, որոնք համատարած տառապանքի մէջ որոշ օժանդակութիւն ցոյց տւած են արևմտահայ փախստականութեան»³⁶։

Արևմտահայ 1-ին համագումարում ընտրված Արևմտահայ և հետագայում վերջինիս կողմից կազմված Ապահովութեան խորհուրդների գործունեության մասին հաշվեհարդար հանձնաժողովի նախագահ Զ. Կորկոտյանի ղեկուցումից և մտքերի փոխանակումից հետո համագումարը ընդունեց մի բանաձև, որով «Արևմտահայ Բ. Համաշխուհեաց, որպես Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ տպատեսանած փախստականութեան ներկայացուցչութիւնը կը յայտարարէ նախկին խորհուրդները բնածած, պահանջելով բարոյական և նիւթական հաշուետւութիւն իրենց ամբողջ գործունեութեան վերաբերմամբ թէ հաւաքականօրէն և թէ անձնապէս»³⁷։

Արևմտահայ 2-րդ համագումարի ընդունած կարևոր փաստաթղթերից էր «Ներգաղթի մասին» բանաձևը։ Թե՛ հարցի մասին ղեկուցողը՝ ներգաղթի հանձնաժողովի նախագահ Ա. Սասունին, և թե՛ մտքերի փոխանակութեան մասնակցած պատգամավորներն առանձնակի՝ բնագծում էին ներգաղթը «պետականօրէն կազմակերպելու հանգամանքը»³⁸։ «Նկատի ունենալով մօտիկ ապագային տեղի ունենալիք արևմտահայ փախստականներու ներգաղթը դեպի իրենց ծննդավայրը և որ այդ ներգաղթը նպատակայարմար և արդիւնաւէտ կը լինի միայն այն ժամանակ, երբ այն կատարուի որոշ կանոնաւորութեամբ, ժողովրդի ֆիզիքական ապահովութեան անհրաժեշտ պայմաններու մէջ,— արձանագրվում էր այդ փաստաթղթում,— Համագումարը կը հրահանգէ ընտրելիք մարմնին այժմէն անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան մօտ և զաշխուհեացներու ներգործօն միջամտութեամբ և աշակցութեամբ պետականօրէն աշխուժելու ներգաղթող ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը և պարենաւորման անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև անոր հետեւող վերաշինութեան գործի իրականացման անհրաժեշտ տեսլիները հաւաքելու»³⁹։

Արևմտահայ 2-րդ համագումարի ստանցքը կազմող արևմտահայ փախստականութեան քաղաքական դիրքորոշման հարցը մի քանի օրվա լուրջ, վիճարանութուններով լի քննութեան առարկա էր դարձել։ Քաղաքական հանձնաժողովի կողմից բժիշկ Խ. Բոնապարտյանը առաջին ղեկուցումով հանդես եկավ փետրվարի 10-ին։ Նա նշեց, «որ յանձնաժողովին զբաղեցրել են հետեւյալ խնդիրները։ 1) Միացյալ Հայաստանի գաղափարի յայտարարութիւնը։ 2) Նուբար փաշայի կառավարութեան ճանաչումը և վստահութիւնը։ 3) Անկախ, Միացյալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը և օրինատացիան։ 4) Մեր դիրքը դէպի Հայաստանի Հանրապետութեան պարլամենտը և կառավարութիւնը։ 5) Միացեալ Հայաստանի վերաբերմունքը դէպի Հայաստանից դուրս գտնուած հայութիւնը։ 6) Մեր վերաբերմունքը դէպի տա-

³⁵ Համաձայն Տեղեկագիր..., էջ 11:

³⁶ «Աշխատանք», 18. 02. 1919:

³⁷ Համաձայն Տեղեկագիր..., էջ 12:

³⁸ «Աշխատանք», 18. 02. 1919:

³⁹ Համաձայն Տեղեկագիր..., էջ 12:

ճիկ կառավարութիւնը»⁴⁰: Հանձնաժողովը միաձայն ընդունել էր Միացյալ Հայաստանի գաղափարի հայտարարութեան և Պողոս Նուբարի կազմած կառավարութեան վստահութեան հարցերը: Հանձնաժողովում երկու իրարամերժ վերաբերմունք էր ձևավորվել Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ համագումարի դիրքորոշման հարցում: «Մի մասը գտել է, որ պէտք է մի պատմական ակտ կատարել, յայտարարելով Միացեալ Հայաստանի անկախութիւնը և նոյնիսկ պատգամաւորներ ուղարկել պարլամենտ, — ասված էր Խ. Բոնապարտյանի զեկուցման մեջ, — Միւս մասի կարծիքն է, որ ինչպէս տաճկահայերը մինչ այժմ չեն ցանկացել այս կամ այն պետութեան քաղաքացիները լինելու, այժմս էլ չեն կարող լինել և մտնելով պարլամենտ, պէտք է դառնան Արարատեան հանրապետութեան քաղաքացիներ, որով և կը մեռնի տաճկահայ դատը»⁴¹:

Փետրվարի 11-ին Խ. Բոնապարտյանը հանդես եկավ քաղաքական հանձնաժողովի երկրորդ, ամփոփիչ զեկուցումով՝ ներկայացնելով երկու նոր բանաձևեր: Արտահայտելով միևնույն մտտեցումը արևմտահայերին հուզող քաղաքական խնդիրների նկատմամբ՝ քննարկման դրված նախագծերը տարբերվում էին Հայաստանի Հանրապետութեան հանդեպ դիրքորոշմամբ⁴²: Քաղաքական հանձնաժողովը այդպես էլ չկարողացավ հաղթահարել առկա տարաձայնությունը, մնալով բաժանված երկու մասի⁴³:

Խ. Բոնապարտյանի երկրորդ զեկուցումից հետո քաղաքական բանաձևի շուրջ ծավալվեց բուռն վիճաբանություն: Ռ. Դրամբյանն իր ելույթում հիմնավորեց համագումարի դաշնակցական մեծամասնութեան տեսակետը. «Այս համագումարի առանցքը քաղաքական հարցն է: Միացեալ Հայաստանի մասին եկանք այն եզրակացութեան, որ եթէ Կովկասահայութիւնը մեզանից անջատուի, Հայաստանը կը կորցնի իր նշանակութիւնը, որովհետև հայ ժողովուրդը շունի ստեղծագործելու համար բաւարար ոյժեր, եթէ միւսները չօգնեն նրան: Եթէ մենք ունենանք երկու անջատ հայրենիքներ, մենք ջլատուած կը լինենք, ունենալ մէկ հայրենիք և մէկ կառավարութիւն, դա է եղել բոլոր հայերի իդէալը: Յանձնաժողովի մեծամասնութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ այդ ակտը պէտք է կատարել ամեն գնով, այսինքն միացման հարցը որոշել գործնականապէս, եթէ մենք յայտարարում ենք միացեալ Հայաստանի անկախութիւնը, ապա և աստիճանաբար պիտի գործի անցնել»⁴⁴: Ռամկավար փոքրամասնութեան տեսակետն արտահայտած Ծ. Հարությունյանը գտնում էր, որ համագումարը իր ձայնը պետք է միացնի Պողոս Նուբարի կառավարութեան «պատմական ակտին», սակայն «միաժամանակ չպիտի անել այնպիսի քայլեր, որոնց վճիռը կախած է ամբողջ արևմտահայութունից», «չպետք է անմիջական մասնակցութիւն ցոյց տալ պարլամենտի մէջ, որ պէսզի թուրքահայ հարցը իրմիջազայնութիւնից դուրս չգայ: ... Եթէ անմիջապէս արևմտահայերը մտնեն պարլամենտի մէջ, կը ստեղծուի հակասական դրութիւն, որովհետև այդպիսով նրանք ոչ միայն պիտի ճանաչեն Պողոս Նուբարի կառավարութիւնը, այլև Քաջսզնունունը: Միացեալ Հայաստանի գաղափարը պիտի իրագործուի երկու կառավարութիւնների փոխադարձ համաձայնութեամբ, որոնք կը մշակեն մի սահմանադրութիւն մեր երկրի համար և այն ժամանակ, իհարկէ, արևմտահայերն էլ կ'իյնեն այս անգամ Միացեալ Հայաստանի պարլամենտում: Իսկ ներկայ պայմաններում ներկայացուցիչներ

⁴⁰ «Ժողովուրդ», 16. 02. 1919:

⁴¹ Նույն տեղում:

⁴² «Աշխատանք», 25. 02. 1919:

⁴³ «Ժողովուրդ», 26. 02. 1919:

⁴⁴ «Ժողովուրդ», 28. 02. 1919:

ուղարկելը պարլամենտ արևմտահայերի կողմից, աննպատակահարմար կլինի մեր դատի շահերի տեսակէտից»⁴⁵; Առաջին տեսակետը պաշտպանեցին Ս. Վրացյանը, Գ. Բուլղարացին, Հ. Կարինյանը, Զ. Կորկոտյանը, Ա. Կիտուրը և Գ. Ոսկերչյանը, երկրորդը՝ Ս. Թոփալյանը, Մ. Մալոյանը և Հ. Վարդապետյանը:

Նույն՝ փետրվարի 11-ի նիստի վերջում քննության դրվեց քաղաքական բանաձևի առաջին կետը և «համագումարը որոտընդոստ ծափերի տակ յայտարարեց Միացեալ Հայաստանի անկախութիւնը»⁴⁶; Ռամկավար հինգ պատգամավորները ձեռնպահ մնացին՝ նման հայտարարութիւնը համարելով «տեսակ մը անվստահութիւն հանդէպ նուպար փաշայի դահլիճին», «ի զուր օդ ծեծելու փորձ և մանավանդ ապագա բարդութիւններ ստեղծող գոյավիճակ մը», «մի նոր տիպի աւանդիրայ», «որ իր հիմքն ունէր «կատարուած փաստերի առաջ դնելու» թէօրիան»⁴⁷:

Առաջին և երկրորդ ընթերցմամբ կետ առ կետ քննելուց հետո փետրվարի 12-ին Արևմտահայ 2-րդ համագումարում ընդունվեց հետևյալ քաղաքական բանաձևը. «Արևմտահայ Բ. Համագումարը քննելով Հայ ժողովրդի ներկայ կացութիւնը.

I. Սրտագին կողջունէ և կը յայտարարէ Ազատ և Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

II. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ և Միացեալ Հայաստանի Պողոս-Նուպար փաշայի Անդրանիկ Դահլիճին:

III. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն համազգային հատուածներու և երկրամասերու միաւորութեամբ:

IV. Կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն թուրր աշխատանքներն, որոնք հարկաւոր են Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:

V. Միաժամանակ կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմին» գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար:

VI. Կը պահանջէ Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը, դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակութեամբ և աջակցութեամբ:

VII. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիւղներուն Վիլհելմի, էնվէրի, Թալեաթի, Ճեմալի, Նազըմի, Պէհաէտտին-Շաքիրի և ընկեր նահանգապետներու, կառավարիչներու և այն բոլոր ղեկավարներու զինտրադաշտային դատարանով պատժելը:

VIII. Կը պահանջէ Հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիւ օսմանեան կառավարութեան»⁴⁸:

Քաղաքական բանաձևի 5-րդ կետի ընդունման դեմ քվեարկելով և «պատ-

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ «Վան-Տոպ», Երևան, 31. 03. 1919:

⁴⁸ Համառոտ Տեղեկագիր..., էջ 13—14:

ճանարանած գրութիւն մը ներկայացնելով՝՝ ուսմկավար հինգ պատգամավորները լքեցին համագումարը⁴⁹: «Մենք կանգնած էինք առողջ և հիմնական տեսակէտի վրայ— որ այս համագումարը կրնայ հազարումի ցանկութիւններ յայտնել, բայց վճռական և զործնական քայլերու հրահանգը սպասելու ենք վերէն— Փարիզի մեր պատերազմութենէն և համախորհուրդէն,— «Ինչո՞ւ հեռացանք Արևմտահայ Բ համագումարէն» հոդվածում պատճառաբանում էին նրանք,— Մնալով փոքրամասնութեան մէջ, միաժամանակ շղաւաճանելով մեր հիմնական մտածողութեան, մենք ըրինք մեր յայտարարութիւնը և դուրս եկանք համագումարէն, ձգելով ամբողջ պատասխանատուութիւնը մնացողներու վրայ»⁵⁰: Ո՞րն էր այդ «հիմնական մտածողութեան» էութիւնը: Այն, որ «ներկայիս Փարիզի մէջ թիրքահայերը ունեն խորհրդածողով, 45—50 պատիրականներու մասնակցութեամբ (հաւաքուած զանազան գաղութներէ, բուն երկրէն և վերջապէս Կովկասէն), իսկ այդ խորհրդածողովը համաշխարհային վեհաժողովի կողքին ունի աւելի հնարատուութիւն և աւելի լայն իրատունքներ ընթացք տալու թիրքահայ խնդրին, քան փախստական արևմտահայութեան մէկ մասի այս սահմանափակ համագումարը» և որ «... միանալով այս (Հայաստանի— Կ. Հ.) հանրապետութեան և մեր անմիջական մասնակցութիւնը բերելով այս բարլամենտին և կառավարութեանը, մենք զմեզ կղզիացուցած կըլլանք ամբողջ թիրքահայութենէն, իսկ այդ դաւաճանութիւն է ամբողջ թիրքահայ ժողովրդի կամքի և ամբողջութեանը նկատմամբ»⁵¹: «Անկասկած, ուսմկավար պատգամատուները աւելի հետեւողական էին իրենց հակաարարատեան տրամադրութիւններով: Պէտք էր կանգնել կամ Հայաստանի, կամ Փարիզի տեսակէտի վրա. ուսմկավարները ընտրեցին վերջինը...,— նշում էր Ս. Վրացյանը⁵²: Հատկանշական է, որ Ռամկավար կուսակցութեան Երևանի վարչութիւնը նախապես հայտարարել էր Արևմտահայ 2-րդ համագումարին շմասնակցելու իր որոշման մասին⁵³: Սակայն կազմակերպիչ կոմիտեից ստանալով հավաստիացումներ «այն մասին, թէ համագումարը զբաղուելու է գերազանցապէս գաղթականական և ներգաղթի խնդիրներով»⁵⁴ ուսմկավարները մասնակցեցին համագումարի աշխատանքին:

Արևմտահայ 2-րդ համագումարի աշխատանքի վերջին օրը, փետրվարի 13-ին գաղտնի քվեարկութեամբ ընտրվեց «Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող Արևմտահայ հատուածի «Գործադիր Մարմին», որի կազմում էին Սմբատ Բորոյանը, Խաչատուր Բոնապարտյանը, Արմեն Սասունին, Գրիգոր Բուլղարացին, Վարդղատ Տերոյանը, Ռուբեն Դրամբյանը, Վահագն Քրմոյանը, Վաղարշակ Հոխիկյանը և Արսեն Կիտուրը⁵⁵: Գործադիր մարմնի կարգավիճակը և իրավասութեան շրջանակները սահմանվում էին նույն օրը համագումարում հաստատված «կազմակերպչական բանաձևում»⁵⁶: «Այսպիսով, ստեղծւում էր մի նոր կառավարութիւն՝ «Արարատեան կառավարութեան» կողքին: Գործադիր Մարմինը կազմակերպւեց պետական հիմունքներով՝ տալով իրեն մի տեսակ նախարարութեան բնոյթ. իր նախագահին և անդամներին տրեց նախարարական դեր: Անգամ նիւթական կողմով յետ շմասնակցութեանը նախագահին նշանակեց վարչապետական ուժեղ, անդամ-

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 14:

⁵⁰ «Վան-Տոսպ», 31. 03. 1919:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Ս. Վրացյան, Աշխ., էջ 232:

⁵³ «Ժողովուրդ», 24. 01. 1919:

⁵⁴ «Վան-Տոսպ», 31. 03. 1919:

⁵⁵ Համառոտ Տեղեկագիր... էջ 15:

⁵⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 14—15:

ներին՝ նախարարական՝ դրամը, ի հարկէ, ստանալով «Արարատեան Հանրապետութեան» գանձարանից, — որոշ հեղնանքով գրում է Ս. Վրացյանը⁵⁷: Ի վերջո, ընդունելով ողջունի մի շարք նամակներ, այդ թվում Ամենայն Հայոց կաթողիկոսին, Պողոս Նուբարին, Հաշտութեան կոնֆերանսին: «Արարատեան Հանրապետութեան» կառավարությանը և խորհուրդին, Արամտահայ 2-րդ համագումարը 1919 թ. փետրվարի 13-ին ավարտեց իր աշխատանքը⁵⁸:

Ինչպիսի՞ վերաբերմունք դրսևորեցին Արևմտահայ 2-րդ համագումարում ընդունված որոշումների նկատմամբ Հայաստանի հանրապետությունում գործող քաղաքական ուժերը: Լեւոնազարները համագումարի նման դիրքորոշման ներքո տեսնում էին դաշնակցութեան նպատակաձգված քաղաքականութիւնը: «Պարզ իրողութիւն է, որ Դաշնակցութեան նախկին առանձնը շնորհեալ դիրքը խախտուած է ղլխովին թիւրքահայ ժողովրդի մեջ և նախկին իր բարեկամները այսօր իր կատաղի հակառակորդներն են, իսկ ինչ կը վերաբերի ռուսահայ իրականութեան այդ ևս լարդ է, ամեն կողմ տարաձայնութիւն, կուսակցական շարքերու մէջ մեծ ու պզտիկ բաժանականութիւն, սկզբունքային տարաձայնութիւններ, իսկ բարձրամենտի մէջ ոչ թէ բաց բնակ, այլ ոչ իսկ հասարակ մեծամասնութիւն: Իսկ տիրող այս կացութիւնը անշուշտ կը սարսափեցնէր Դաշնակցութիւնը, մանաւանդ ռուսահայ Դաշնակցութիւնը: Այս բաղդորոշ ըողկներուն հազիւ թէ նման մատչելի միջոց ներկայացած ըլլար դաշնակցութեան և նա տենդագին աշխատանքով կպու գործին: Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը կամ այդ գաղափարը իրականացնելու համար անմիջական մասնակցութիւնը այս բարձրամենտին ու կառավարութեան՝ տտնը բոլորը արտաքին աստուոջ կը կազմէին իր հիմնական և կարևոր նպատակին, իսկ այդ նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ ամրացնել իրեն՝ դաշնակցութեան խախտուած դիրքը, իսկ ինչ որ կարևոր է, միացնելով իր ձայնին նաև փախստական թիւրքահայութեան ձայնը, անվստահութիւն յայտնել Նուպար փաշայի Դահլիճին, որովհետև այդ դահլիճը օր ու գիշեր դատար չի տար դաշնակցութեան արտօնեալ և միահեծան՝ գրութեան ու ապահով հանգստին»⁵⁹: Կարևոր է ենթադրել, որ նման տեսակետը սլաշտպանում էին նաև ռամկավարներին մտտ կանգնած ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչները, շնայած արևմտահայ համագումարի ընդունած որոշումները չէին հակասում այն խնդիրներին, որոնց լուծումը, ըստ ժողովրդականների, պետք է հանդիսանար համագումարի հիմնական գործը⁶⁰:

Հայ քաղաքական թատերաբեմի ծայրահեղականները՝ կոմունիստները, նույնպես արտահայտեցին իրենց վերաբերմունքը: Համագումարի հրավիրման կապակցութեամբ կոմունիստների «խոսք» թերթը հանդես եկավ «Արևմտահայ թ համագումարի առիթով» հողվածով, որն ավարտվում էր հետևյալ եզրակացութեամբ. «Այո՛, մի համագումարից, որին կարող են մասնակցել միայն Երևանի նահանգի արևմտահայերը, և այն էլ նրանց մի մասը, և որը ամենայն հավանականութեամբ կընտրի մի նոր մարմին, էլի խմբապետներից ու ջոջերից, նրանց կը յանձնի Արևմտահայ փախստականների բաղդի տնօրինումը, մենք ոչինչ չենք սպասում»⁶¹: Համագումարից հետո նույն թերթում տպագրված մի հողվածում նշվում էր, որ «այս համագումարի աթոռ-

⁵⁷ Ս. Վրացյան, Աշխ., էջ 284:

⁵⁸ Տե՛ս Համաձուտ Տեղեկագիր..., էջ 15:

⁵⁹ «Վան-Տոսպ», 31. 03. 1919:

⁶⁰ «Ժողովուրդ», 05. 02. 1919:

⁶¹ «Խոսք», Երևան, 31. 01. 1919:

ներին պատահականորէն բազմած պատգամատրները... բռնած էին քաղաքական մեծամեծ ու հսկայական ակտեր կատարելու տենչով: Միացեալ և անկախ Հայաստան, «Ղարաբաղի լեռներէն մինչև Կիլիկիոյ դրունք», Պողոս Նուբարի կառավարութիւն, Պարիզի վեհաժողովը կատարած իրականութեան առջև դնել են, են: Մեծախօսութիւններ, թղթէ ծրագիրներ, սապոնային ճառեր, երեխայական անմիտ ոգևորութիւն, ահա համագումարի պատկերը»⁶²,

Արևմտահայ դաշնակցականների փետրվարի 14-ի խորհրդակցական ժողովը, որին մասնակցում էին արևմտահայ 2-րդ համագումարի 47 պատգամավորներ, Արևմտյան Հայաստանի և Հայաստանի կենտրոնական կոմիտեների, ինչպես նաև արևելյան բյուրոյի ներկայացուցիչները, «անդրադառնալով արևմտահայ Բ. համագումարի որոշումներուն... իր վստահութիւնը յայտնեց և յանձնարարեց որ կուսակցական բոլոր մարմիններն ու ընկերները աշխատին իրականացնել այդ որոշումները, ժողովրդականացնեն ընկերական և հասարակական լայն շրջաններու մէջ»⁶³:

Անկասկած, Հայաստանի Հանրապետութեան ղեկավար շրջաններին լիովին շէր կարող գոհացնել Արևմտահայ 2-րդ համագումարի քաղաքական դիրքորոշումը, հատկապես այն հանգամանքը, որ համագումարը «լիակատար վստահութիւն» հայտնեց Պողոս Նուբարի «Անդրանիկ Դահլիճին»՝ որպէս «Ազատ և Միացեալ Հայաստանի լիիրավ կառավարութեան: Իսկ Հայաստանի Հանրապետութեան համագումարի փաստաթղթերում այդպես էլ մնաց լուր որպէս «Արարատեան Հանրապետութիւն»: Եվ դա ակնհայտորեն արտահայտվեց կառավարութեան և գործադիր մարմնի հետագա փոխհարաբերութեանը: Ա, ինչը առանձին բնութեան առարկա է:

Արևմտահայ 2-րդ համագումարը լուծեց իր առջև դրված հիմնական խնդիրները: Համագումարի պատգամավորները, որպէս Հայաստանի Հանրապետութեան տարածքում ապաստանած փախստականների ներկայացուցիչներ, ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեցին իր բնօրրանից բռնի դուրս մղված հայ ժողովրդի արևմտյան հատվածի հայրենի երկիր վերադառնալու կամքն ու վճռականութեանը: Համագումարը քաղաքական բանաձևի 5-րդ կետով նորընտիր գործադիր մարմնին պարտադրեց «իր մասնակցութիւնը բերելու» Հայաստանի Հանրապետութեան «գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համագոյային միութիւնը իրականացնելու համար»: Իրանով իսկ առաջին քայլն արվեց Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ արևմտահայերի հայտնի վերաբերմունքի մեջ շրջադարձ կատարելու ուղղութեամբ: Արևմտահայ 2-րդ համագումարը նկատելի իրադարձութեան էր Հայաստանի Հանրապետութեան՝ հասարակական քաղաքական կյանքում և իր ուրույն տեղն ունի արևմտահայ փախստականութեան պատմութեան մեջ:

К. П. АИРАПЕТАН — Второй съезд западных армян. — Второй съезд западных армян, прошедший в Ереване с 6-го по 13-ое февраля 1919 г., явился значительным событием в общественно-политической жизни Республики Армения и занимает особое место в истории западноармянских беженцев. Съезд определил «политические цели и идеалы» западноармянских беженцев: создание объединенной и независимой Армении и условий для их беспрепятственного возвращения на родину. Одновременно съезд сделал определенный шаг в сторону взаимодействия с политическим руководством Республики Армения.

⁶² Նույն տեղում, 08. 03. 1919:

⁶³ «Աշխատանք», 18. 02. 1919: